Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N1

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԽՈՐՀՈՒՐԴ) ՆԻՍՏԻ

2026թ. հունվարի 30

Նախագահում էր՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին Խորհրդի անդամներ

Անուշ Թութիկյան	«Ամերիկայի հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ
Հայարփի Կարապետյան	«Մարդը կարիքի մեջ» ԲՀԿ
Հասմիկ Գևորգյան	«Արդարության նոր մշակույթ» ՀԿ
Գրիգոր Հովհաննիսյան	«Ակցիա սովի դեմ» հիմնադրամ
Նարե Սարգսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միություն
Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
Աննա Հովհաննիսյան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ
Նաիրա Ավետիսյան	Ֆիզիկական անձ
Նաիրուհի Սաֆարյան	«Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ
Նաիրա Առաքելյան	«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ
Տիրուհի Նազարեթյան	«Հայաստանի արհմիությունների Կոնֆեդերացիա» հանրապետական միություն
Աննա Մելիքյան	«Փինք» ՀԿ
Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Արևիկ Հովհաննիսյան	«Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ
Արամ Ստեփանյան	«Հայկական Կարմիր խաչի ընկերություն» ՀԿ
Վահե Արզումանյան	«Սպիտակ ձեռնափայտ» ՀԿ

Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
Հասմիկ Արզումանյան	«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ
Մարգարիտ Ստեփանյան	«Կանայք հանուն բնության» ՀԿ
Անահիտ Պապիկյան	Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ
Ժասմենա Խաչատրյան	«Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ
Աննա Դանիելյան	«Վիններթ Գորիս» հիմնադրամ
Նաիրա Հարությունյան	«Դու մենակ չես» ՀԿ
Հունան Հունանյան	«Սատար» ՀԿ
Սևակ Գալստյան	Ֆիզիկական անձ
Հերմինե Այվազյան	«Արևամանուկ» հիմնադրամ

Բացակայում էին

Տաթևիկ Աղաբեկյան	«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ
Անահիտ Գևորգյան	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հկ
Քրիստինե Մխիթարյան	«ՕքսԵՋեն» հիմնադրամ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցում էին՝

Լուսինե Քոչարյան	Նախարարի տեղակալ
Աննա Մկրտումյան	ՄՍԾ պետի առաջին տեղակալ
Արտակ Հարությունյան	Ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության պետ
Էդգար Բզնունի	Ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ընտանիքի սոցիալական գնահատման

բաժնի պետ

Նվեր Կոստանյան Մամուլի քարտուղար

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Անապահովության գնահատման նոր համակարգ

2. Հարց-պատասխան, քննարկում

Նախագահը մինչ Խորհրդի անդրանիկ նիստի օրակարգային հարցերին անդրադառնալը ողջունեց Խորհրդի անդամներին՝ կարևորելով համագործակցության արդյունքում համատեղ ջանքերի ներդրումը սոցիալական պաշտպանության ոլորտում բարեփոխումների իրականացման և խնդիրների լուծման գործում: Նիստի անցկացման ձևաչափի վերաբերյալ քննարկումներից հետո Նախագահն առաջարկեց նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանին ներկայացնել անապահովության գնահատման նոր համակարգի վերաբերյալ տեղեկատվություն՝ համեմատական ներկայացնելով նախկին համակարգի հետ:

Ըստ այդմ, նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանը ըստ մարզերի ներկայացրեց ամփոփ և վիճակագրական տեղեկատվություն ՀՀ աղքատության ցուցանիշների վերաբերյալ՝ միաժամանակ նշելով, որ 2021թ. համեմատ առկա է աղքատության շեմի բարելավում: Լ. Քոչարյանը մանրամասնեց նպաստի իրավունքի ձեռքբերման անհրաժեշտ նախապայմանները, չափորոշիչները և դիմելու ընթացակարգերը: Նախարարի տեղակալը նշեց, որ անապահովության գնահատման նոր համակարգի առանցքային նշանակություն ունեցող բաղադրիչներից է արժանապատիվ կյանքի ապահովումը, որի հիմքը կայուն զբաղվածությունն է:

Ներկայացման վերջում ամփոփվեցին շուրջ մեկ տարի Կոտայքի և Սյունիքի մարզերում իրականացվող պիլոտային ծրագրի շրջանակում արձանագրված դրական, ինչպես նաև ռիսկային և խնդրահարույց գործոնները, որոնց ուղղությամբ տարվում են բարելավման շարունակական աշխատանքներ՝ ՀՀ ողջ տարածքում ծրագրի իրականացումն անխոչընդոտ դարձնելու նպատակով:

Խորհրդի նախագահը, ի լրումն նախարարի տեղակալի կողմից ներկայացված տեղեկատվության, մատնանշեց նախկին գնահատման համակարգի հիմնական թերությունը՝ նշելով, որ նախկին կարգով անապահով ընտանիքներին պետության կողմից տրամադրվում էր փոքր դրամական աջակցություն՝ որևէ քայլ չձեռնարկելով ընտանիքի սոցիալական վիճակի բարելավման ուղղությամբ: Նոր համակարգը հիմնված է ընտանիքին անապահովությունից հանելու սկզբունքի վրա. ակտիվ զբաղվածության ծրագրերի իրականացմամբ համակարգն անձին հնարավորություն է ընձեռելու ունենալու կայուն եկամուտ, լիարժեք զբաղվածություն՝ կենսապայմանները բարելավելու համար, անհրաժեշտության դեպքում Կառավարության կողմից ստանալով կենցաղավարման, ինչպես նաև թվային գրագիտության համար անհրաժեշտ գիտելիքներ՝ համապատասխան դասընթացների մասնակցությամբ:

Ամփոփելով պիլոտային ծրագրի արդյունքները, Խորհրդի նախագահը ներկայացրեց իր կողմից արձանագրված 3 այն կետերը, որոնք լրացուցիչ քննարկումների կարիք ունեն՝

1. Նոր համակարգում սահմանաչափային եկամուտի չափը համապատասխանեցված է ՆՊԶ-ին, որի չափը պակաս է նվազագույն կենսաթոշակի չափից: Արդյունքում միայնակ կենսաթոշակառուները/ֆունկցիոնալության սահմանափակում ունեցողները դուրս են մնում համակարգից:
2. Երևան քաղաքում և մարզերում գույքահարկերի շեմերը տարբեր են սահմանված, սակայն տարանջատված չեն Երևանամերձ բնակավայրերը:
3. Համակարգում Stop գործոնների շարքում ներառված է սպառողական վարկեր ունենալու հանգամանքը, ինչն ըստ Նախագահի բարեկեցության նշան չէ և այս առումով անհրաժեշտ է քննարկել վերջին 1 կամ 2 տարվա վարկերի հաշվառման հարցը:

Խորհրդի անդամների կողմից ներկայացված առաջարկություններից կարևորվեցին հետևյալ դիտարկումները՝

- Անհրաժեշտ է անապահովության գնահատման համակարգում ընդգրկվելու հայտերի մերժման հաղորդագրությունները ներկայացնել բացված՝ նշելով մերժման համար հիմք հանդիսացած համապատասխան հիմնավորում/պատճառը,
- Մշակել իրավական և վարչարարական մեխանիզմ, որով ընտանեկան կամ կենցաղային բռնության ենթարկված կանանց և նրանց խնամքին մնացած անչափահաս երեխաների անապահովության նպաստի վճարումը կապահովվի շարունակական կերպով այն բոլոր դեպքերում, երբ վերջիններս անվտանգության նկատառումներից ելնելով լքում են համատեղ բնակության վայրը:

  Մեխանիզմը պետք է նախատեսի, որ բռնությունից տուժած կնոջ փաստացի բնակության վայր կարող է ճանաչվել՝
  - ապաստարանը,
  - ծնողների կամ այլ հարազատների բնակության վայրը,
  - վարձակալած բնակարանը,

անկախ մշտական գրանցման հասցեյից կամ անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունից:

Առաջարկվող կարգավորումը պետք է ապահովի նպաստի վճարման դադարեցումը բռնարարին և դրա վերագրանցումը փաստացի տուժած անձին՝ բացառելով այն դեպքերը, երբ բռնարարը շարունակում է ստանալ ընտանեկան կամ երեխաների խնամքի նպաստը, մինչ կինը և երեխաները փաստացի բնակվում են այլ հասցեում:

Վերոնշյալ ձևակերպումը նպատակ ունի ապահովել սոցիալական պաշտպանության շարունակականությունը, համապատասխանել սոցիալական պաշտպանության և բռնության կանխարգելման պետական քաղաքականության տրամաբանությանը, ինչպես նաև նվազեցնել նպաստների չարաշահման ռիսկերը:

- Իրականացնել համապատասխան փոփոխություն գործող իրավակարգավորումներում՝ ապաստան փնտրող անձանց կողմից աշխատանքի ընդունման հայտերի ընդունումը հնարավոր դարձնելու նպատակով, քանի որ ներկայումս ամրագրված անհրաժեշտ փաստաթղթերի

ցանկում ներառված չէ ապաստարանի փաստաթուղթը, ինչը խոչընդոտ է հանդիսանում վերջիններիս զբաղվածության ապահովման գործում և այլն:

Անապահովության համակարգում բարեփոխումների իրականացման առնչությամբ կարևորելով զբաղվածության ապահովումը, Խորհրդի կողմից որոշվեց հաջորդ նիստին քննարկել Զբաղվածության ծրագրերն ու դրանց վերաբերող հարցերը:

Նախարարին կից հասարակական խորհրդի նիստը նախարարի և խորհրդի անդամների համաձայնությամբ անցկացվել է դռնփակ ձևաչափով:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Recoverable Signature

X

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360 **ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ**

Արձանագրությունը կազմեց՝ Հասմիկ Պետրոսյանը